ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

5/9

N 02/871-12
16.02.12թ.

0078 երևան, Հայաստան 41 Կ, հեռ. 380385
Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am

**Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ա. Տեր-Սիմոնյանին**

Ի կատարումն ՀՀ կառավարության 2012թ. փետրվարի 9-ի
15/15.4/1634-12 թվակիր հանձնարարականի

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայտնում ենք, որ «Լայթհաուս-Փարոս» բարեգործական հիմնադրամի կողմից 2012-2016 թվականների ընթացքում իրականացվող «Մայրատուն» բարեգործական ծրագրի որոշ կետերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ ծրագրի 5-րդ կետով ծրագրի իրականացման վայր է նախատեսված ՀՀ և ԼՂՀ ամբողջ տարածքը, մինչդեռ ծրագրի 10-րդ կետով նախատեսվում է հավաքագրված օգնությունը տեղափոխել միայն Հայաստան: Ծրագրի 7-րդ կետով որպես բարեգործություն ստացող են նշված հասարակության ամենախոցելի խմբերը, սոցիալապես ծայրաստիճան անապահով խավը, մինչդեռ 3-րդ կետով բարեգործություն ստացող են համարվում նաև «ԲՀԿ-ի համատեղ գործունեություն /20 հոգի/»: Այդ առումով անհրաժեշտ է հստակեցնել, թե կոնկրետ ինչ խոցելի խմբի մասին է խոսքը, քանի որ ծրագիրը նպատակ է հետապնդում աջակցելու միայն վերը նշված խոցելի խմբերին:

Այդ առումով առաջարկում ենք լրամշակել և հստակեցնել ներկայացված ծրագրի դրույթները:

5/9

Հարգանքով՝

Գ. Մուրադյան

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն,
Ա. Ստեփանյան, հեռ.՝ 380-227

N 035/3948-12
16.02.12թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

5/9

« 13 » 02 2012 թ.

N 88/2678-5/897-12

Ձեռ 2012-02-09, 15/15.4/1634-12

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Քննարկելով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Լայթհաուս-Փարոս» բարեգործական հիմնադրամի կողմից 2012-2016 թվականներին իրականացվող՝ «Մայրատուն» բարեգործական ծրագրի մասին» որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

Հարգանքներով՝

Տ. Բերիկյան

Կատարող՝ Միջազգային կապերի բաժին
հեռ.563-791

N 040/3608-12
13.02.12թ.

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 65, ֆաքս. (374 10) 54 31 60 <http://www.mss.am>



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

5/9

« 29 » 02 2012թ.
974510-62-104

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ
պարոն Դ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Սարգսյան

Ի պատասխան ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Լայթհաուս-Փարոս» բարեգործական հիմնադրամի կողմից 2012-2016 թվականներին իրականացվող «Մայրատուն» բարեգործական ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ Ձեր դիմումի՝ հայտնում եմ, որ դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ

ԲԸԾ 2-րդ դասի պետական խորհրդակալ

Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

393

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՏԵՂԱԿԱՆ ԲԱԶՄ
Մտնող թիվ՝ 017-30302
02.03.2012թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ 5/9

0015, Երևան, Մ. Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

13.02.12թ N 26/2/3-4/1135-12


«Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 09.02.2012թ. թիվ 15/15.4/1634-12 գրությանը կից ներկայացված «Լայթաուս-Փարոս» բարեգործական հիմնադրամի կողմից 2012-2016 թվականների ընթացքում իրականացվող «Մայրատուն» բարեգործական ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ հայտնում եմ.

Կից ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում հարակից գործարքների շրջանակները որոշելու համար անհրաժեշտ եմ համարում ծրագրի 10-րդ կետում հստակ նկարագրել ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքները և ծառայությունները, ինչպես նաև դրանց արժեքները: Միաժամանակ՝ անհրաժեշտ եմ համարում ծրագրի 11-րդ կետում ներկայացնել կազմակերպչական ծախսերի մանրամասն նկարագիրը՝ ըստ ծախսման ուղղությունների:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում եմ լրամշակել ծրագիրը:

 Ա. ԱղաՎերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ. 594652

N 044/3580-12
13.02.12թ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ 5/9

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, ընդունարան հեռ. 596-659, քարտուպարություն, հեռ. 596-125

N 35/239

«20» 02 2012թ.

Ձեր 15/15.4/1634
09.02.12թ


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ ոստիկանությունում քննարկվել է «Լայթաուս-Փարոս» բարեգործական հիմնադրամի կողմից 2012-2016 թվականներին իրականացվող՝ «Մայրատուն» բարեգործական ծրագրի մասին» ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը:

Առաջարկվում է նախագծին կից ներկայացված ծրագրի 13-րդ կետում «ՀՀ Ներքին գործերի նախարարություն» բառերը փոխարինել «ՀՀ ոստիկանություն» բառերով:

ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ՝

 Վ. ՎԱՄՊԱՐՅԱՆ

332

Իրավաբանական վարչություն
կառարող՝ Արմինե Ավոյան
հեռ՝ 59-66-87

«22» 02 2012թ.
016/4431



5/9

<< 10 >> 02 2012թ.

N 01/06/415-12

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 02.09.2012թ. N15/15.4/1634-12 գրության, տեղեկացվում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Լայթհաուս-Փարոս» բարեգործական հիմնադրամի կողմից 2012-2016 թվականներին իրականացվող՝ «Մայրատուն» բարեգործական ծրագրի մասին» որոշման նախագիծը քննարկվել է ՀՀ Արմավիրի մարզպետարանում:
Ձեռք առարկում այն որպես բարեգործական որակելու:

ՄԱՐԶՊԵՏ՝

Կատ՝ Լ.Մուրադյան
Ծ.Գրիգորյան

Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ը Ք


ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Լայթհաուս-Փարոս» բարեգործական հիմնադրամի կողմից 2012 - 2016 թվականներին իրականացվող «Մայրատուն» բարեգործական ծրագրի մասին» որոշման նախագիծը կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

5/9

Դիտողության կամ առաջարկության բովանդակություն	Հիմնավորում
<p>ՀՀ արդարադատության նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ</p> <p>Որոշման նախագիծը վերաբերյալ հայտնում են, որ ծրագրի որոշ կետերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ ծրագրի 5-րդ կետով ծրագրի իրականացման վայր է նախատեսված ՀՀ և ԼՂՀ ամբողջ տարածքը, մինչդեռ ծրագրի 10-րդ կետով նախատեսվում է հավաքագրված օգնությունը տեղափոխել միայն Հայաստան: Ծրագրի 7-րդ կետով որպես բարեգործություն ստացող են նշված հասարակության անենախոցելի խմբերը, սոցիալապես ծայրատիպի անապահով խավը, միջբն. 3-րդ կետով բարեգործություն ստացող են համարվում նաև «ԲՀԿ-ի համատեղ գործունեություն /20 հոգի/»: Այդ առումով անորոշեղծ է հառապեցնել, թե կոնկրետ ինչ խոցելի խմբի մասին է խոսքը, քանի որ ծրագրից նպատակ է հետապնդում աջակցելու միայն վերը նշված խոցելի խմբերին: Այդ առումով առաջարկում ենք լրամշակել և հստակեցնել ներկայացված ծրագրի դրույթները:</p>	<p>Կազմակերպությունը ներկայացրել է պարզաբանում և ծրագրի լրամշակված տարբերակը (կցվում են):</p>
<p>ՀՀ կառավարության արդյունքի պետական եկամուտների կոմիտեի դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ</p> <p>Կից ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում հարակից գործարքների շրջանակները որոշելու համար անհրաժեշտ են համարում ծրագրի 10-րդ կետում հստակ նկարագրել ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքները և ծախսարկունները, ինչպես նաև դրանց արժեքները: Միաժամանակ՝ անհրաժեշտ են համարում ծրագրի 11-րդ</p>	<p>Կազմակերպությունը ներկայացրել է ծրագրի լրամշակված տարբերակը:</p>

Մ 112/3446-12
10.02.11թ.

<p>կնտում ներկայացնել կազմակերպչական ծախսերի մանրամասն նկարագրի՝ ըստ ծախսման ուղղությունների: Եթե երկ վերագրված արագարկում են լրանշակել ծրագրից:</p>	<p>«ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության դիտորդությունների և առաջարկությունների վերաբերյալ Սյունյան նախագծի վերաբերյալ առաջարկում են, ծրագրի 13-րդ կետում «ՀՀ ներքին գործերի նախարարություն» բառերը փոխարինել «ՀՀ ոստիկանություն» բառերով:</p>	<p>կնտում ստորագրողի անունը և ծրագրի վերաբերյալ:</p>
--	---	--



ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԽԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԽՈՒՆԴԱԾՈՂՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐԻ «LIGHTHOUSE-PAROS CHARITABLE FOUNDATION»

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
խամակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Պատճենը՝ ՀՀ Արդարադատության նախարարի
ատաշին տեղակալ Գ. Մուրադյանին

Ի պատասխան ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի խամակարգման հանձնաժողովի նախագահ Ս. Տեր-Սիմոնյանի 20.02.2012թ. №15/15.4/2081-12 և

ՀՀ Արդարադատության նախարարի ատաշին տեղակալ Գ. Մուրադյանի 16.02.2012թ. №02/871-12 գրությունների՝ տալիս ենք հետևյալ պարզաբանումները.



Հայտնում ենք Ձեզ, որ հիմնադրամի կողմից Ձեր քննարկմանը ներկայացված «Մայրատուն» բարեգործական ծրագրի 5-րդ և 10-րդ կետերում տեղ է գտել վրիպում՝ կապված ծրագրի իրականացման վայրի հետ: Նախատեսվում է ծրագիրն իրականացնել ՀՀ և ԼՂՀ ողջ տարածքում:

Ծրագրի 7-րդ կետը լրանշակվել է և ծրագրում տրված է առարկության վերաբերյալ հստակ պարզաբանում.

Բարեգործություն ստացող են համարվում ԲՀԿ-ների հետ համատեղ գործունեությամբ, նրանց կողմից ներկայացված, բռնության ենթարկված, սոցիալապես ծայրաստիճան անապահով կանայք և մինչև 3 տարեկան երեխա ունեցող մայրերը: Նշված ԲՀԿ-ներից են Կանանց Ռեսուրսային Կենտրոնը, Կանանց Իրավունքների Կենտրոնը, Ջանգալատունը, և այն բոլոր ԲՀԿ-ները, որոնք զբաղվում են բռնության ենթարկված կանանց և երեխաների հարցերով:

Խնդրում ենք Ձեզ, հաշվի առնելով ծրագրի կարևորությունը ՀՀ և ԼՂՀ ողջ տարածքում, «Մայրատուն» ծրագիրը որակել բարեգործական:

Տնօրեն՝ Նաիրա Մուրադյան

«**ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԽԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԽՈՒՆԴԱԾՈՂՈՒՄ**»

02 03 2012

27.02.2012

5/10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
— 2012 թվականի N Մ — Ա

5/10

«ՀԱՅՎԱԿԱՆ ԱՎՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՍՏԱԴՐԱՄԻ
ԿՈՂՄԻՏ 2012 – 2014 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՏՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի ապրիլի 6-ի N 3/3.8-1/4408-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի ապրիլի 2-ի N 02/1987-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի մարտի 30-ի N ՀՔ/22/2598-12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի մարտի 28-ի N ՖԲ/ԱնՄ-5/2176-12, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012 թվականի ապրիլի 2-ի N 03/07-1/3247-12, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մարտի 28-ի N ԱԱ/3-4/2635-12 ու Երևանի քաղաքապետի 2012 թվականի ապրիլի 2-ի N 02/34-15562-ի եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակելի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Վրացական 9, բն. 44, ՀՎՀՀ՝00074765) 2012 թվականի ապրիլից մինչև 2014 թվականի մարտ ամիսն ընկած ժամանակահատվածում իրականացվող՝ 300000000 դրամ ընդհանուր արժեքով «Լոյս» հայի աչքերին» (վեցերորդ փուլ) ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված գործարքներն անմիջականորեն կապված են նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Լիկվոր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01201697) 2012 թվականի մարտի 1-ին կնքված՝ N 2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի ապրիլի 1-ից մինչև 2014 թվականի մարտի 31-ը ընկած ժամանակահատվածում բժշկական սարքավորումների և դեղորայքի ձեռքբերում՝ 2000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05507136) 2012 թվականի փետրվարի 20-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի փետրվարի 20-ից մինչև 2014 թվականի փետրվարի 20-ը ընկած ժամանակահատվածում բժշկական պարագաների և դեղորայքի ձեռքբերում՝ 3000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Ֆարմատեք» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01818051) 2012 թվականի մարտի 15-ին կնքված՝ N ՀԿԸ 15-03 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012

թվականի ապրիլի 1-ից մինչև 2014 թվականի մարտի 31-ը ընկած ժամանակահատվածում բժշկական պարագաների և դեղորայքի ձեռքբերում՝ 1000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Լիոն Փրինթինգ Սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01829254) 2012 թվականի մարտի 1-ին կնքված՝ N 2012/1 պայմանագրում նշված գործարքները, որոնցով նախատեսվում են ընդհանուր հետազոտության հարցաթերթիկների և նյութերի տպագրում՝ 500000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի և հանրակրթական նյութերի տպագրում՝ բրոշյուր, պատաստ, ձեռնարկներ՝ 500000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Մեգամետ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01552095) 2011 թվականի նոյեմբերի 1-ին կնքված՝ N 30 պայմանագրում (հավելված N 1) նշված գործարքները, որոնցով նախատեսվում է 2012 թվականի ապրիլի 1-ից մինչև 2014 թվականի մարտի 31-ը ընկած ժամանակահատվածում հիմնադրամի գրասենյակի «Ինտերնետ» ցանցի ծառայությունների մատուցում՝ 600000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի և ակնաբուժական կրթական կենտրոնի գրադարանի «Ինտերնետ» ցանցի ծառայությունների մատուցում՝ 600000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Փարմիսիս Հեպտա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00100064) 2012 թվականի ապրիլի 1-ին կնքված՝ գովազդային և մարքեթինգային ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հանրակրթական ֆիլմերի և իրազեկման հոլովակների նկարահանման ծառայությունների մատուցում՝ 2000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Մաստերկոմպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01566751) 2009 թվականի օգոստոսի 1-ին կնքված՝ N MCS04/2009 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակազմային տեխնիկայի վերանորոգման և սպասարկման ծառայությունների մատուցում՝ 720000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի

8) «ԱրմենՏեյ» ՀՊՊ ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2003 թվականի հունիսի 19-ին կնքված՝ N 281773,790,792, 2004 թվականի մայիսի 27-ին կնքված՝ N 47763, 2005 թվականի ապրիլի 15-ին կնքված՝ N 010510380 և դեկտեմբերի 29-ին կնքված՝ N 289257 պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է 2012 թվականի ապրիլի 1-ից մինչև 2014 թվականի մարտի 31-ը ընկած ժամանակահատվածում բջջային հեռախոսակապի և հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 3000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

9) «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝01555351) 2009 թվականի ապրիլի 16-ին կնքված՝ N 07-0098-7 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի ապրիլի 1-ից մինչև 2014 թվականի մարտի 31-ը ընկած ժամանակահատվածում գրասենյակի ջրամատակարարում՝ 150000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

10) «Հայրուսգազարդ» ՓԲԸ-ի Երևանի ԳԳՄ-ի հետ (00046317) 2008 թվականի փետրվարի 1-ին կնքված՝ N3-015.02.08.6176 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի ապրիլի 1-ից մինչև 2014 թվականի մարտի 31-ը ընկած ժամանակահատվածում հիմնադրամի գրասենյակի գազամատակարարման ծառայությունների մատուցում՝ 2000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

11) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Արևմուտք» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի հունվարի 24-ին կնքված՝ N 6303 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի ապրիլի 1-ից մինչև 2014 թվականի մարտի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների մատուցում՝ 1000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրա-


5/10

գրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին ու Հայաստանի Հանրապետության Արարատի, Արմավիրի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզպետներին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է



«Հայկական Այնաբուժական Սոցիալական Գործունեության Կենտրոն» հասցեագրված հասարակական կազմակերպության նախագահ Հայաստանյան գրասենյակի տնօրեն

«06» ապրիլ 2012.

«ԼՈՒՅՍ ՀՍԻԻ ԱՉՔԵՐԻՆ» ծրագիր / VI – վեցերորդ / ՓՈՈՒ Տ Ր Ա Չ Ի Բ

1. Ծրագրի նպատակը	<ul style="list-style-type: none"> • Նվազեցնել ձեռք բերովի կուրությունը բնակչության շրջանում: • Հասանելի և մատչելի դարձնել ակնաբուժական ծառայությունները և բուժօգնությունը և բուժօգնությունը, աջակցել միայնակ և կարիքավոր ծերերին, գոհված ազատամարտիկների ընտանիքներին, հաշմանդամներին: • Բարելավել ծառայությունների որակն ակնաբուժության բնագավառում՝ ստեղծել ինտերնետային դասընթացներ և թեստեր ի շարունակություն և անցկացրած վերապատրաստման դասընթացների տեղակյան ակնաբույժների, ակնաբուժական բուժօրոյրների, ակնաբուժական բժշկների, բուժօրոյրների և բուժականակաբարձուկան կետերի աշխատողների համար: • Օժանդակել բնակչության շրջանում ակնային հիվանդությունների, բուժման և կանխարգելիչ միջոցառումների անհրաժեշտության մասին տեղեկատվության տարածմանը և իրագրություն բարձրացմանը:
2. Ծրագրի բարեգործական դրավման նպատակը	Նախատեսում ենք ծրագրի շրջանակներում՝ օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից:
3. Բարեգործը	Հիմնադրամի ծրագրի ֆինանսավորման հիմնական աղբյուրն է ԱՄՆ-ում գտնվող «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական ընկերությունը (The Armenian Eye Care Project Corporation)՝ որը հանդիսանում է Հայկական ակնաբուժության նախագիծ ԲՀ-ի ենթակառուցվածքով:
4. Ծրագրի կատարողը	«Հայկական Այնաբուժական Սոցիալական Կենտրոն» բարեգործական հիմնադրամը, ՀՎՀՀ՝ 00074765, իրավաբանական հասցե՝ Վրացական 9, բն. 44, իրական հասցե՝ Այգեստան, 5-րդ փ., 7-րդ տուն հեռ.: 55 90 68; 577611:
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրը առնչվում է առողջապահական և սոցիալական ոլորտներին և ընդգրկում է Արմավիրի, Սյունիքի, Կոտայքի, Տավուշի, Վայոց ձորի, Շիրակի, Լոռու և Արարատի մարզերը, Երևան քաղաքի սոցիալական հաստատությունները, Երևանի և մարզերի ծննդատների ինտենսիվ թերապիայի բաժանմունքները:
6. Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր կտրվորույթի արժեքը՝ 300,000,000 ՀՀ դրամ

5/10

Խառնույթ	ա/հետազոտություն/բուժում/վերականգնողական	Բ/մասնագիտական վերազարթուում	Գ/համայնքի կրթական/տեղիկ ապովություն	Վարչական ծախսեր	ԸՆԴՀԱՆՈՒՐ
2012					
Ապրիլ-հունիս	36,180,000	2,700,000	5,400,000	9,720,000	54,000,000
հուլիս-սեպտեմբեր	34,170,000	2,550,000	5,100,000	9,180,000	51,000,000
հոկտեմբեր-դեկտեմբեր	20,100,000	1,500,000	3,000,000	5,400,000	30,000,000
ընդամենը 2012	90,450,000	6,750,000	13,500,000	24,300,000	135,000,000
<i>Ծախսեր որոնց համար մարզատարածքից ազատում է ԱՄՀ և մարզատարածքից ազատում</i>	20,025,000	1,395,000	2,925,000	3,361,500	27,706,500
Ծախսեր՝ որոնց համար չի հայցվում է ԱՄՀ և մարզատարածքից ազատում	70,425,000	5,355,000	10,575,000	20,938,500	107,293,500
2013					
հունվար-մարտ	10,050,000	750,000	1,500,000	2,700,000	15,000,000
Ապրիլ-հունիս	36,180,000	2,700,000	5,400,000	9,720,000	54,000,000
հուլիս-սեպտեմբեր	34,170,000	2,550,000	5,100,000	9,180,000	51,000,000
հոկտեմբեր-դեկտեմբեր	20,100,000	1,500,000	3,000,000	5,400,000	30,000,000
ընդամենը 2013	100,500,000	7,500,000	15,000,000	27,000,000	150,000,000
<i>Ծախսեր՝ որոնց համար հայցվում է ԱՄՀ և մարզատարածքից ազատում</i>	22,250,000	1,550,000	3,250,000	3,735,000	30,785,000
Ծախսեր՝ որոնց համար չի հայցվում է ԱՄՀ և մարզատարածքից ազատում	78,250,000	5,950,000	11,750,000	23,265,000	119,215,000
2014					
հունվար-մարտ	10,050,000	750,000	1,500,000	2,700,000	15,000,000
ընդամենը 2014	10,050,000	750,000	1,500,000	2,700,000	15,000,000
<i>Ծախսեր՝ որոնց համար հայցվում է ԱՄՀ և մարզատարածքից ազատում</i>	2,225,000	155,000	325,000	373,500	3,078,500
Ծախսեր՝ որոնց համար չի հայցվում է ԱՄՀ և մարզատարածքից ազատում	7,825,000	595,000	1,175,000	2,326,500	11,921,500
Ծրագրի ամբողջ գումարը	201,000,000	15,000,000	30,000,000	64,000,000	800,000,000

5/10

7.	Բարեգործություն ստեղծող	<p>Ծախսեր՝ որոնց համար հայցվում է ԱՄՀ և մարզատարածքից ազատում</p> <p>Ծախսեր՝ որոնց համար չի հայցվում է ԱՄՀ և մարզատարածքից ազատում</p> <p>ՀՀ մարզերի և Երևանի բնակչությունը՝ արքատ, անազանիկ ընտանիքները/ըստ ընտանիկան հսկողական նպատակներ համակարգի սահմանային մեծությունից սկսած [30 միավոր]/, երեխաները, թոշակառուները, հաշմանդամները, հաշմանդամները, գրեկած ազատանարտիկների ընտանիքները, անհույս երեխաները, որոնց սպասում է անհատական ռեսուրսային/ԱՄՀ/ պատճառով առաջացած կուրտոսյան վրանգը: Ընդհանուր ակնախն երեխաներից օգտվելու իրավասությունը ստուգվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած ընտանիկան անապահովության ցուցանիշի միջոցով՝ մարզային և տեղական ինքնակառավարման մարմինների հետ բնակիմ: ՀԱՄՀ-ի շահառուներն են. ընդհանուր հետազոտությունների դեպքում՝ 15000 մարդ/հետադարձ 3000 երեխան/բուժման/վերականգնողական դեպքում՝ 5000 մարդ, անհաս երեխաների հետազոտությունների բուժման/ԱՄՀ/ դեպքում է՝ 500 հոգի, ընդամենը 22000 մարդ: Այկախին հիվանդությունների, բուժման և կանխարգելիչ միջոցառումների ստեղծակալության և իրազեկության շահառուների թիվը կես միլիոն մարդ է: Մասնագիտական կրթական ծրագրի շահառուներն են 150 բուժաշխատող:</p>	44,500,000	3,100,000	6,500,000	7,470,000	61,570,000
8.	Ծրագրի իրականացման տևողություն	<p>Ծրագրի իրականացվելու է 2012 թ. ապրիլ -2014 թ. մարտ ժամանակաշրջանը ընթացում:</p>	156,500,000	11,900,000	23,500,000	46,530,000	238,430,000
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծախսեր	<p>Ծրագրի նախատեսված բոլոր միջոցառումները անվճար են, դրանք են: (ա) կանխարգելիչ/հետազոտություն/բուժում/վերականգնողական/ակնոցների տրամադրում: Այս բարդարիչի համար նախատեսվում է ընդամենը 201,000,000.00 ՀՀ դրամ, (գ) մասնագիտական վերապատրաստում/դասընթացներ, որոնց համար նախատեսվում է 15,000,000 ՀՀ դրամ, և (դ) համայնքի իրազեկություն/տեղիկապետություն, կրթություն, որի համար նախատեսվում է 30,000,000 ՀՀ դրամ: Ծրագրի բարեգործները իրականացվում են ՀՀ տարածքում ըստ հետևյալ ժամանակացույցի՝ Արարատ (ապրիլ-մայիս, 2012) Վայոց Ձոր (հուլիս 2012), Սյունիք (հուլիս-օգոստոս, 2012), Արմավիր (սեպտեմբեր -հոկտեմբեր, 2012), Կոտայք (մարտ-մայիս, 2013), Տավուշ (մայիս 2013), Շիրակ (հուլիս- օգոստոս, 2013), Լոռի (սեպտեմբեր -հոկտեմբեր 2013), Երևան (սոցիալական հաստատություններ-2012, 2013, 2014): Այկախին ընդհանուր գնումներ իրականացվելու են նաև դպրոցներում: <i>Ազդի շարժական հիվանդանոց (ԱՀՀ)</i> շրջելու է մարզերով և կատարելու տեսողական բուժում և վերականգնողական հիմնված ընդհանուր ակնախն հետազոտությունների արդյունքների վրա: Անհատական ռեսուրսային/ԱՄՀ/ ծրագրի աշխատանքները կատարվում են ընտրված ծննդատներում շուրջ տարի: ՀԱՄՀ ԲՀ «Լույս հայի աջգրիմ» ծրագրի ընդհանուր կազմակերպիչն է 300,000,000 ՀՀ դրամ: Վարչական ծախսերը ծրագրի ընդհանուր արժեքի 20 տոկոսը չեն գերազանցում: Ծրագրի շրջանակներում նախատեսված գործարքները ա/կանխարգելիչ/հետազոտություն/բուժում/վերականգնողական/ակնոցների տրամադրում • Այկախություն և թշնկական սարքավորումների, դեղորայքի ներմուծում՝ կազմակերպիչի արժեքի համար • Այկախություն/թշնկական սարքավորումների և դեղորայքի գնում՝ արժեքը 2,000,000 ՀՀ դրամ ստանց ԱՄՀ-ի, ըստ մարտի 1, 2012թ-ին կնքված համար 2 պայմանագրի «Լիկվոր» ՓԲԸ (Ք. Երևան, Մարտի 1, 2012)»:</p>	156,500,000	11,900,000	23,500,000	46,530,000	238,430,000
10.	Չարք թեկվող (ներմուծվող) ապրանքների ու ծախսերի բյուջեների համարտուց նկարագրող, ծախսերը և նախատեսվող	<p>ՀԱՄՀ ԲՀ «Լույս հայի աջգրիմ» ծրագրի ընդհանուր կազմակերպիչն է 300,000,000 ՀՀ դրամ: Վարչական ծախսերը ծրագրի ընդհանուր արժեքի 20 տոկոսը չեն գերազանցում: Ծրագրի շրջանակներում նախատեսված գործարքները ա/կանխարգելիչ/հետազոտություն/բուժում/վերականգնողական/ակնոցների տրամադրում • Այկախություն և թշնկական սարքավորումների, դեղորայքի ներմուծում՝ կազմակերպիչի արժեքի համար • Այկախություն/թշնկական սարքավորումների և դեղորայքի գնում՝ արժեքը 2,000,000 ՀՀ դրամ ստանց ԱՄՀ-ի, ըստ մարտի 1, 2012թ-ին կնքված համար 2 պայմանագրի «Լիկվոր» ՓԲԸ (Ք. Երևան, Մարտի 1, 2012)»:</p>	156,500,000	11,900,000	23,500,000	46,530,000	238,430,000

5/10

- Այնպիսի անվանումները և դերոտային գումարները **3,000,000** ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի ըստ 2012 թ-ի փետրվարի 28-ին կնքված մատակարարման պայմանագրի ԱՖա-Ֆարթ ՍՊԸ-ի հետ (Ք. Երևան Մարմնի 1, ՀՎՀՀ 05507136):
- Այնպիսի անվանումները և դերոտային գումարները **1,000,000** ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի ըստ 2012 թ. մարտի 15-ին կնքված ՀԳՆ 15-03 12 թ-ի պայմանագրի «Տարմատեթ» ՍՊԸ-ի հետ (Ք. Երևան, Բաժնի 111, ՀՎՀՀ 01818051):
- Հերթահանում հետազոտության հարցաթղթից հետո և նյութերի տպագրում, արժեքը **500,000** ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի ըստ մարտի 1, 2012 թ-ին կնքված համար 2012/01 պայմանագրի «Լիոն Պրինթինգ Մեքսիկա» ՍՊԸ-ի հետ (Ք. Երևան, Արշակունյաց 135Ե, բն. 37, ՀՎՀՀ 01829254):

• Վատելիքի ձեռքբերում՝ կողմնորոշիչ արժեքը **5,000,000** ՀՀ դրամ **Ֆլեշ ՍՊԸ-ից** (Ք. Երևան, Կոռբարցու 30, ՀՎՀՀ 01808789) մտորել ներկայացված է այս բաղադրիչի ընդհանուր պատկերը՝ ներառյալ այն ծախսերը որոնց համար հայցվում են հարկային և մարտային արտոնություններ/ տես վերանշվածը/ ինչպես նաև այն ծախսերը, որոնց համար չեն հայցվում այդ արտոնությունները:

կամ/հարցվելու/հետազոտություն/բուժում/վերահաստատում/անվճարների տրամադրում	
Այնպիսի անվանում և բժշկական սարքավորումներ, դեղորայքի մեքենաներ	33 000 000
Այնպիսի անվանում/բժշկական սարքավորումներ և դեղորայքի գումար «Լիկվոր»	2 000 000
Այնպիսի անվանում/բժշկական պարագաների և դեղորայքի Աֆաֆարմ	3 000 000
Այնպիսի անվանում/բժշկական պարագաների և դեղորայքի Ֆարմատեթ	1 000 000
Հերթահանում հետազոտության հարցաթղթից հետո և նյութերի տպագրում Լիոն Փրինթինգ	500 000
Վատելիք	5 000 000
Ծախսերը որոնց համար հայցվում է ԱԱՀ և մաքսատույքներից ազատում	44 500 000
Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով ստացվող ընտների արժեքը	105 000 000
բուժանճնախազգի օրակարգը և ապրելակարգը	28 000 000
Ծրագրում ընդգրկված աշխատողների աշխատավարձը	20 000 000
բուժակարգազանք	1 000 000
Զնայատեսակած ծախսեր	2 000 000
Ծախսերը որոնց համար չի հայցվում ԱԱՀ և մաքսատույքներից ազատում	156 000 000

- Բ/ Ստանդարտիզացիայի վերապատրաստում/դասընթացներ
- Այնպիսի անվանում նյութերի և ուսուցողական սարքավորումների մերմոնում ԱՄՆ-ից և Եվրոպայից՝ կողմնորոշիչ արժեքը **2,000,000** ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:
- ՀԱՄ-ի անվարտաժամ/ կրթական կենտրոնի գրադարանում տեղակայված համակարգչային զանգույն ինտերնետային կապի սպահովում և պատասխանում՝ մասնագիտական գիտելիքների բարելավման համար, արժեքը՝ **600,000** ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի ըստ 2011 թ. նոյեմբերի 1-ին կնքված N 30 պայմանագրի «Մեգանես» ՍՊԸ-ի (Ք. Երևան, Թախանյան 2, 23 ՀՎՀՀ 01552095) հետ:
- Ուսումնական և գրասենյակային պիտույքների ձեռքբերում – ՀԱՄ-ի բարոնացման համար, կողմնորոշիչ արժեքը **500,000** ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:

Ստորև ներկայացված է այս բաղադրիչի ընդհանուր պատկերը՝ ներառյալ այն ծախսերը, որոնց համար հայցվում են հարկային և մաքսային արտոնություններ/ տես վերանշվածը/ ինչպես նաև այն ծախսերը, որոնց համար չեն հայցվում այդ արտոնությունները:

Մասնագիտական վերապատրաստում/դասընթացներ	
Այնպիսի անվանում նյութերի և ուսուցողական սարքավորումների մերմոնում ԱՄՆ-ից և Եվրոպայից	2 000 000

5/10

ՀԱՄ-ի անվարտաժամ/ կրթական կենտրոնի գրադարանում տեղակայված համակարգչային զանգույն ինտերնետային կապի սպահովում և ապաստարանում	600 000
Ու-ստանդարտի և գրասենյակային պիտույքների ձեռքբերում	500 000
Ծախսերը որոնց համար հայցվում է ԱԱՀ և մաքսատույքներից ազատում	3 100 000
Ինտերնետային կապի, տիպոյի և ծրագրային ապահովության ծախսեր	500 000
Մասնագիտական վերապատրաստումը սպահովող մասնագետի օրակարգը և ապրելակարգը	1 000 000
վեբ կայքի գործազման և պահպանման ծախսեր	2 500 000
բժշկական կրթության մասնագետի աշխատավարձ	2 500 000
Անաստօբան ռեֆերնոսալոգի կոնֆերանսի, մասնակիցների ճանապարհածախս և ապրելակարգ	5 400 000
Ծախսերը որոնց համար չի հայցվում ԱԱՀ և մաքսատույքներից ազատում	11 900 000

- Համրային իրազեկություն/տեղեկատվություն/կրթություն
- Այնպիսի տեղեկատվական նյութերի մերմոնում ԱՄՆ/Եվրոպայից՝ կողմնորոշիչ արժեքը **4,000,000** ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:
- Համրային տեղեկատվական նյութերի տպագրում (բրոշյուր, պատարտ, ձեռնարկներ)՝ արժեքը **500,000** ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի ըստ մարտի 1, 2012 թ-ին կնքված համար 2012/01 պայմանագրի «Լիոն Պրինթինգ Մեքսիկա» ՍՊԸ-ի հետ (Ք. Երևան, Արշակունյաց 135Ե, բն. 37, ՀՎՀՀ 01829254):

• Բրազիլական հողիկների մկարահանում՝ կողմնորոշիչ արժեքը **2,000,000** ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի ըստ 2012 թ. ապրիլի մեկնից ուժի մեջ մտնող գովազդային և մարքեթինգային ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի «Փարմախ Նեպոտա» ՍՊԸ-ի հետ (Ք. Երևան, Հրուսիսային պող. 1/19, 0010, ՀՎՀՀ 00100064):

Ստորև ներկայացված է այս բաղադրիչի ընդհանուր պատկերը՝ ներառյալ այն ծախսերը որոնց համար հայցվում են հարկային և մաքսային արտոնություններ/ տես վերանշվածը/ ինչպես նաև այն ծախսերը որոնց համար չեն հայցվում այդ արտոնությունները:

Համրային իրազեկություն/տեղեկատվություն/կրթություն	
Այնպիսի տեղեկատվական նյութերի մերմոնում ԱՄՆ/Եվրոպայից	4 000 000
Համրային իրազեկման նյութերի տպագրում	500 000
Բրազիլական հողիկների մկարահանում	2 000 000
Ծախսերը որոնց համար հայցվում է ԱԱՀ և մաքսատույքներից ազատում	6 500 000
Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով ստացվող կրթական նյութերի արժեքը	13 000 000
համրային կրթության ուսուցողի օրակարգը և ապրելակարգը	3 000 000
համրային իրազեկության մասնագետի աշխատավարձ	6 000 000
գրենական պատույթներ գործարքներ պարզեցված հարկով աշխատող կազմակերպության հետ	1 500 000
Ծախսերը որոնց համար չի հայցվում ԱԱՀ և մաքսատույքներից ազատում	23 500 000

- Բնութագրական կարեկալին կապի սպահովում և տեխնիկական սպասարկում - արժեքը՝ **600,000** ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի ըստ 2011 թ. նոյեմբերի 1-ին կնքված N 30 պայմանագրի «Մեգանես» ՍՊԸ-ի (Ք. Երևան, Թախանյան 2, 23 ՀՎՀՀ 01552095) հետ
- Հանակարգչային տեխնիկայի վերանորոգման և ապաստարանի ծառայություն - արժեքը **720,000** ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի ըստ 2009 թ. օգոստոսի 1-ին կնքված MCS 04 /2009 պայմանագրի «Մաստերկոմս» ՍՊԸ (Ք. Երևան, Թախանյան 2/33, ՀՎՀՀ 01566751)
- Հետախուսային կապ չորս բաղադրային գիծ ըստ 2005 թ-ին կնքված N 010510380 պայմանագրի, հինգ բջջային գիծ, ըստ 2003 թ-ին կնքված N 281773, 790, 792 պայմանագրերի, 2004 թ. կնքված N 47769 պայմանագրի և 2005 թ-ին կնքված N 289257, պայմանագրի

11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական և ծախսերը

5/10

(ընդհանուր համար ըստ մոր համակարգի 113293093) Արմենի (ք. Երևան, ՀՎՀՀ 02500052) հետ, ընդհանուր արժեքը՝ 3,000,000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:

- ՀԱՆ-ի գրասենյակի ջրամատակարարում՝ 150,000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի ըստ Երևանի «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ 2009 թ. ապրիլի 4-ին կնքված 07-098-7 պայմանագրի (ք. Երևան, Արմավի 66 ա ՀՎՀՀ 01555351):
- ՀԱՆ-ի գրասենյակի գազամատակարարում՝ 2,000,000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի ըստ «Հայմուտագազայր» ՓԲԸ-ի Երևանի գզի-ի հետ 2008 թ. փետրվարի 2-ին կնքված պայմանագրի N. 3.015.02.08.6176 (ք. Երևան, Չարենցի 141ա ՀՎՀՀ 0004631):
- ՀԱՆ-ի գրասենյակի էլեկտրամատակարարում՝ 1,000,000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի ըստ «Հայաստանի էլեկտրակայան ցանցեր» ՓԲԸ-ի «Արևմուտք» մասնաճյուղի հետ 2008 թ. հունվարի 24-ին կնքված N 6303 պայմանագրի (ք. Երևան, 015205882, Արշալույսյաց 17ա ՀՎՀՀ 015205882):

Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերի ընդհանուր արժեքն է՝ 54,000,000 ՀՀ դրամ: Ստորև ներկայացված է այս բաղադրիչի ընդհանուր պատկերը՝ ներառյալ այն ծախսերը որոնք համար հայցվում են հարկային և մաքսային արտոնություններ (տես վերոնշյալը, ինչպես նաև այն ծախսերը, որոնց համար չեն հայցվում այդ արտոնությունները: Ինտերմուսյան կարելալին կապի ապահովում և տեխնիկական ապահովում 600 000
 Հումակարգչային տեխնիկայի վերանորոգման և սպասարկման ծախսերուն 720 000
 Հեռախոսային կապ՝ 3 000 000
 ՀԱՆ-ի գրասենյակի ջրամատակարարում 150 000
 ՀԱՆ-ի գրասենյակի գազամատակարարում 2 000 000
 ՀԱՆ-ի գրասենյակի էլեկտրամատակարարում 1 000 000
 Ծախսեր՝ որոնք համար հայցվում է ԱԱՀ և մաքսատուրքերից ազատում 7 470 000
 անճանկազմի աշխատակարգ 35 000 000
 հաշվապահական ծախսերուն 4 500 000
 առաքիտ 2 500 000
 գրասենյակային պարագաներ 2 000 000
 չմտառնուկած ծախսեր 2 530 000
 Ծախսեր՝ որոնք համար չի հայցվում ԱԱՀ և մաքսատուրքերից ազատում 46 530 000

Հումագործակցությունը պետական կառավարման կառավարման, տեղական ինքնակառավարման և հասարակական կազմակերպությունների հետ: ՀՀ արտոնադրության մախարարությունը համակարգում է ծրագրի: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի մարմինները, ՀԱՆ-ը համագործակցում է տեղական ինքնակառավարման մարմինների և մարդկատարանների հետ՝ բարձրացնելու ակտիվությունը և ակտիվ աշխատանքի մարմինները, շահատուների ցուցակները վերատուգելու, տվյալները և տեղեկատվությունը տարածելու համար:
Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը իրականացվում է «Հայկական Այնարժույթային Նախագի» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի, ամենա բարեգործների, ՀՀ ԿԲԾՀՀ, ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ ԿԲԾՀՀ, ՀՀ առողջապահության նախարարության և սոցիալական հարցերի մարմինների կողմից: Ծախսային հաշվետվություններ ներկայացվում են էլ-կետով հիմնադրի բարեգործին, եռամսյակային հաշվետվություններ՝ ՀՀ ԿԲԾՀՀ համահամարմանը: Մարզում ծրագիրը ակտիվորեն հաշվետվություններ են ներկայացվում ՀՀ արտոնադրության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի մախարարություններին, և համախառնային մարդկատարաններին:

12. Հումագործակցությունը պետական կառավարման կառավարման, տեղական ինքնակառավարման և հասարակական կազմակերպությունների հետ: ՀՀ արտոնադրության մախարարությունը համակարգում է ծրագրի: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի մարմինները, ՀԱՆ-ը համագործակցում է տեղական ինքնակառավարման մարմինների և մարդկատարանների հետ՝ բարձրացնելու ակտիվությունը և ակտիվ աշխատանքի մարմինները, շահատուների ցուցակները վերատուգելու, տվյալները և տեղեկատվությունը տարածելու համար:

13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը իրականացվում է «Հայկական Այնարժույթային Նախագի» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի, ամենա բարեգործների, ՀՀ ԿԲԾՀՀ, ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ ԿԲԾՀՀ, ՀՀ առողջապահության նախարարության և սոցիալական հարցերի մարմինների կողմից: Ծախսային հաշվետվություններ ներկայացվում են էլ-կետով հիմնադրի բարեգործին, եռամսյակային հաշվետվություններ՝ ՀՀ ԿԲԾՀՀ համահամարմանը: Մարզում ծրագիրը ակտիվորեն հաշվետվություններ են ներկայացվում ՀՀ արտոնադրության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի մախարարություններին, և համախառնային մարդկատարաններին:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
 Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

5/10

0010, Երևան, Մելիք-Աղայան փող. 1
 Հեռ. (+374 10) 59 52 26

6.04.12 № 3/381/4408-12

Ձեռ № _____

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ՝ պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր- Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 05.04.12թ. ՀԱՆ/ՆԵ/703 և իլրումն մեր 05.04.2012թ N 15/15.1/4144-12 գրության՝ կապված <<Հայկական ակնաբուժության նախագիծ>> բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի լրամշակված տարբերակի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ա. Եսեկ

Ատոմ Զանցուղայան

N 034/9234-12

6.04.12թ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

5/10

N 02/1985-12
2.04.12թ.

0078 Երևան, Հայաստան 41 Թ, հեռ. 380385
Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am

**Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ա. Տեր-Սիմոնյանին**

Ի կատարումն ՀՀ կառավարության 2012թ. մարտի 27-ի
15/15.4/4311-12 թվակիր հանձնարարականի

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայտնում ենք, որ «Հայկական ակնաբուժական նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից 2012-2014 թվականների ընթացքում իրականացվող ծրագրի 5-րդ և 7-րդ կետերի միջև առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ ծրագրի 5-րդ կետով նախատեսվում է, որ ծրագիրը բացի մարզերից, իրականացվելու է նաև Երևան քաղաքի սոցիալական հաստատություններում, ինչպես նաև ծննդատների ինտենսիվ թերապիայի բաժանմունքներում, մինչդեռ 7-րդ կետով որպես բարեգործություն ստացող Երևանը նշված չէ:

Այդ առումով առաջարկում ենք լրամշակել և հստակեցնել ներկայացված ծրագրի դրույթները:

Հարգանքով՝

Գ. Մուրադյան

N 035/8534-12
2.04.12թ.



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ**

5/10

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
Էլ. փոստ minister@moh.am

30.03.12թ. N ԿԲ/22/2598-12
Ձեր N _____

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 27.03.2012թ. թիվ 15/15.4/4311-12 գրության կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից 2012-2014 թվականներին իրականացվող ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Հ.ՔՈՒՇԿՅԱՆ

N 020/8270-12
30.03.12թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

5/10

N 88/2620-5/2176-12

« 28 » 03 2012 թ.

Ձեռ 2012-03-27, 15/15.4/4311-12

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Քննարկելով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից 2012-2014 թվականներին իրականացվող ծրագրի մասին» որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

Հարգանքներով՝

Տ. Բերիկյան

Կառարող՝ Միջազգային կապերի բաժին
հեռ. 56-34-91

N 040/8047-12
28.03.12թ.

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 65, ֆաքս. (374 10) 54 31 60 http://www.mss.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

DEPUTY MINISTER

5/10

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Տեղ./Tel.: 58 03 02, ֆաքս/ֆակс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главная проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: miens@edu.am, www.edu.am

N 03/07-1/3247-12 2 04 2012

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր սույն թվականի մարտի 27-ի N8/15.4/4311-12 գրությամբ կարծիքի ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից 2012-2014 թվականներին իրականացվող ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ հետևյալը:

«Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից ներկայացված «Լույս հայի աչքերին» ծրագրի 10-րդ կետի «հանրակրթական ֆիլմեր» հասկացությունը ենթակա է պարզաբանման: Միաժամանակ խնդրում եմ հստակեցնել ծրագրի 12-րդ կետում նշված ծրագրի իրականացման ընթացքում ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ նախատեսված համագործակցությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ս.ՄՎԻՏՅԱՆ

N 031/8597-12
2.04.12թ.

կար. Ն.Սահակյան
հեռ. 524777



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

5/10

0015, Երևան, Մ. Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

N 2424/3-4/2635-12
28.03.12թ.


«Կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ա. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 27.03.2012թ. թիվ 15/15.4/4311-12 գրությանը կից ներկայացված
«Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից
2012-2014 թվականների ընթացքում իրականացվող ծրագրի մասին» որոշման
նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ հայտնում եմ.

Կից ներկայացված ծրագրի 10-րդ և 11-րդ կետում ներկայացված ծախսերի
հանրագումարը կազմում է 61,57 մլն. դրամ, այն դեպքում, երբ ծրագրի 6-րդ կետում
ընդհանուր բյուջեն նշված է 300,0 մլն. դրամ: Ծրագրից պարզ չէ, թե ինչ
նպատակով են ծախսվելու ծրագրի բյուջեի մնացած 238,43 մլն դրամ գումարները:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ եմ համարում ներկայացնել
համապատասխան պարզաբանումներ:

 Ա. ԱղաՎերյան

Անողակի հարկերի բաժին, հեռ. 594652

N 044/8049-12
28.03.12թ.



ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՏԵՂԱԿԱԼ

5/10

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1


№ 02/34-155624

«02» 04 2012թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 27.03.2012թ. հ. 15/15.4/4311-12 գրության՝
տեղեկացնում եմ, որ Երևանի քաղաքապետարանում քննարկվել է
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի «Հայկական ակնաբուժության նախագիծ»
բարեգործական հիմնադրամի կողմից 2012-2014 թվականներին
իրականացվող ծրագրի մասին» որոշման նախագիծը, որի վերաբերյալ
դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝  Կ. ԱՐԵՅԱՆ

Կատ. Ռ. Չարայան
հեռ. 51 41 79

02/6

«ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՍԵՐՏԻՖԻԿԱՏ
ՍԵՐՏԻՖԻԿԱՏ
10078642
03 04 2012թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայկական ակաբուժության նախագիծ» բարեգործական ինժեներային կողմից 2012 - 2014 թվականներին իրականացվող «Լույս՝ հայի աչքերին» (վեցերորդ փուլ) ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը	Հիմնավորում
<p>ՀՀ արդարադատության նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ</p> <p>Որոշման նախագծի վերաբերյալ հայտնում են, որ ծրագրի 5-րդ կետով նախատեսվում է, որ ծրագիրը բացի մարզերից, իրականացվելու է նաև Երևան քաղաքի սոցիալական հաստատություններում, ինչպես նաև ձնորատների ինտենսիվ թերապիայի բաժանմունքներում, մինչդեռ 7-րդ կետով որպես բարեգործություն ստացող Երևանը նշված չէ:</p> <p>Այդ ատումով առաջարկում ենք լրանշակել և հստակեցնել ներկայացված ծրագրի դրույթները:</p>	<p>Կազմակերպությունը ներկայացրել է պարզաբանում ծրագրի լրանշակված տարբերակը:</p>
<p>ՀՀ կրթության և գիտության նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ</p> <p>Որոշման նախագծի վերաբերյալ հայտնում են, որ ծրագրի 10-րդ կետի «հանրամարտական ֆիլմեր» հասկացությունը ենթակա է պարզաբանման: Միաժամանակ խնդրում են հստակեցնել ծրագրի 12-րդ կետում նշված ծրագրի իրականացման ընթացքում ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ նախատեսված համագործակցությունը:</p>	<p>Կազմակերպությունը ներկայացրել է պարզաբանում և ծրագրի լրանշակված տարբերակը:</p>
<p>ՀՀ կառավարության առջև ընկած խնդիր պետական եկամուտների կոմիտեի դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ</p> <p>Որոշման նախագծի վերաբերյալ հայտնում են, որ ծրագրի 10-րդ և 11-րդ կետում ներկայացված ծախսերի հանրագումարը կազմում է 61,57 մլն. դրամ, այն դեպքում, երբ ծրագրի 6-րդ կետում ընդհանուր բյուջեն նշված է 300,0 մլն. դրամ: Ծրագիրը</p>	<p>Կազմակերպությունը ներկայացրել է պարզաբանում և ծրագրի լրանշակված տարբերակը:</p>

5/10

<p>պարզ չէ, թե ինչ նպատակով են ծախսվելու ծրագրի բյուջեի մնացած 238,43 մլն դրամ գումարները:</p> <p>Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ են համարում ներկայացնել համապատասխան պարզաբանումներ:</p>	

5/10



ՀԱՆՆԵ/705

Ապրիլ 6, 2012

5/10

Պետական եկամուտների կոմիտեի
 նախագահի առաջին տեղակալ
 Ա. Արավերդյանին

ՀՀ Արդարադատության
 նախարարի առաջին տեղակալ
 Գ. Մուրադյանին

ՀՀ Կրթության և գիտության
 նախարարի տեղակալ
 Մ. Մկրտչյանին

պատճենը
 ՀՀ Կառավարության բարեգործական
 ծրագրերի համակարգման
 հանձնաժողովի
 նախագահ պարոն Ա. Տեր-Սիմոնյանին

Ի պատասխան «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի մարտ 22, 2012 –ին ներկայացված ծրագրի նախագծի վերաբերյալ ուղղված հարցադրումների, որոնք ստացվել են ՀՀ Պետական եկամուտների կոմիտեից, ՀՀ Արդարադատության նախարարությունից, ինչպես նաև ՀՀ Կրթության և գիտության նախարարությունից, ներկայացնում են հետևյալ պարզաբանումները:

Պետական եկամուտների կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Ա. Արավերդյանի ստորագրությամբ 28.03.12 թ. հ. ս. Ա/3-4/2635-12 նամակում արժարժված հարցին պատասխանում ենք, որ ներկայացվող ծրագրի ընդհանուր արժեքը 300 մլն է, և կազմում է այն գումարը, որ Հայկական ակնաբուժության նախագիծը նախատեսում է ծախսել Հայաստանի մարզերում «Լույս հայի աչքերին» ծրագրի իրականացման համար 2012 թ. ապրիլ – 2014թ. մարտ ժամանակահատվածում: Նշված 300 մլն. դրամը ներառում է անհրաժեշտ դրամական միջոցները, սարքավորումների և պարագաների արժեքը: Այդ գումարի 238,43 մլն դրամը կազմում են այն ծախսերը, որոնց համար ՀԱՆ-ը չի հայցում հարկային և մաքսային արտոնություններ: Այստեղ ընդգրկված են Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով ստացվող բեռների արժեքը, ինչպես նաև անձնակազմի աշխատավարձը, բուժանձնակազմի օրավարձը և ապրելավարձը, հաշվապահական ծառայությունները և աուդիտը: Այս մասում ներառված են նաև կարճաժամկետ պայմանագրերը և գործարքները պարզեցված հարկով աշխատող կազմակերպությունների հետ:

696

